

ՍՈՒՆ
ԱՆՏՈՆՅԱՆ

XXI դար
հայ պոեզիա

Դ ա ռ Ն
Ո Ն
գ վ ա թ թ

Սոնա Անտոնյան

ԴԱՌՆ ՈՒ ԶՎԱՐԹ
(բանաստեղծություններ)

Խմբագիր՝ Սլավի-Ավիկ Հարությունյան

ԵՐԿԻՐ

երկիրը ափերիս քնքշանում է
փլվում է արահետներին
ծունր իջած լռությունը
ցողը նրա
բացը նրա
բացգույնը
շոշափելի տարածությամբ՝
վար-վեր
ճիշտ կրակ տված բացխուփ լռությունը
անստույգ ու հուզիչ բառերը
երբեք չասված
այդպես ճշգրիտ
այդպես փակ է և
օ՝ հեղեղումը
թե իրավ մեր արթնությունն է

թե իրավ է սերը
այսժամ մի ներկայություն է
անհուսալի գրկում՝
կապույտ կապույտ
տերեփուկների թրթռոցով

և իրավ է սերը
և փակ
և անզգույշ փակ է

մեր հոգիների պատմությունը

(լույս տեսնի՝ այս հունը չխորանա)

օ՛ հեղեղում է հեղեղում է
խռովարար քամին և հույզը բացխուփի՝
թափվում է
չնվիրած այս ի՛նչ ծաղկաթերթեր
հազարանուն ճիշտ շոյումներ
վար-վեր
և բառերը՝ միշտ ճշգրիտ
երբեք այդքան
կրկին
և բացխուփը՝ զգույշ
թևատարած պտղին
ո՞վ է քնքշացնում քեզ երգող հեռվում

ճիշտ - կրկին
բացխուփ

ԴԱՌՆ ՈՒ ԶՎԱՐԹ

ես այսօր անուններ եմ տալիս
և բառերը քիչ են
բառեր համարյա թե չկան
օրվա անոթներն են մազե
և կամուրջներ պահող արյունն է տաք
գիտեմ՝
պետք է ասես՝
պահն այս վեր է ամեն ինչից
դառն է ծաղկաբույրից
բայց հրճվանքն է քմայք՝ աղջկական
ու խենթ
օղին դառն է...
բայց մենք պետք է խմենք
ծնված երգի համար

մեր թախիծն է մանուշակի գույնի
խնդալը մեր՝ փակ ու խելառ
կորչող վախի թերթերն էլ թաց

բա՛րկ է օղին...
բայց ես պետք է ասեմ այդ անունները հար
որ տաքանան ու թալկանան-
մեկ է՝ կշատանանք
մեզ մեր ցավն է ներսից վառում
հանգչող կրակներին երես տվող չկա
թա՛նկ է այս օրն...
մեր աչքերի թրթռոներին
հազար անուն տվող էլ կա
վախն ընկած է ոտքերիս տակ՝
աշնան փախչող տերևների-
շռայլ է ու ամա՛
զգույշ անցնեմ այս սերերի մոտով
սիրտը՝ փշրվող է...
գիտեմ՝ բարկ է օղին
բայց զվարթ ենք հիմա
և դեռ խնձոր ունենք
միշտ վերնից ընկնող...
հուզումն է լուռ և՛ խելահեղ և՛ ճիշտ
ճիշտ է պահը մանուշակով թախծի
ծաղկի դառնաբույրը մեր ուզածն է հիմա
բայց ես պետք է ասեմ՝
բա՛րկ է բա՛րկ է...
հազարանուն խռովքներից
գեթ մեկը
մնա

ԱՅՍՕՐ

այսօր
առավոտից առաջ
երկնքին թաց ու մութ
մտատանջ եմ
մի ցուրտ ճերմակիս տխուր թնջուկին
դիպել
բանաստեղծություն չդարձած
եղածի նման էր

ես հազա
օրվա պարտությունը երկրի
երկնքին թողեցի
իմ առազաստները թևաբաց
իմ թռչուններին սիրաշատ

հիմա՝
այս օրը
ես ուզում եմ հիշել
որի գիշերը տաք էր և ես
ոչ մի անգամ վեր չթռա

անձրևը շատ էր թաց
ես ծառերի համար
անպատասխան մնացի
ամենագեղեցիկը

օր է անընդհատ կատարյալ
ուր ոչ մի ծաղկով չի ընդհատվում սերը
ոչ մի մտատանջությամբ երկնքի
չի աղարտվում գեղեցիկը

հիմա
ես օր եմ
և երբեք չեմ վերջանում
ես ամպային չեմ հիմա
երբեք չեմ վերջանա թխպով

երբեք չեմ վերջանա

ԻՆՁ

1.
երբ ինձ թողեցի քո ներսում
ծալեցի դողերս
շաղերը ներծծեցի
պարանոցս
հպմանն ի վար
հպմանն ի վեր հակված

անդրադարձար
բարձրացար
բարձրացա
ինձնից վեր՝
քեզնից վեր՝ փաթաթվեցի գոլերով
քո կոշտ-բրդյա փայփայումը
քո հիացմունքը
իշխեց

ծածկեց

վրայովս հայելի
դիմադրում
նեղ-նեղացած

բոլոր լուսամփոփների մեջ
լույս ճչացի
լո՛ւյս

խոնարհվեցի գրասեղանիդ
խրտնեցի
տառապանք վերցնող ճերմակիդ դիպա
սահեցի՝ թերթ-թերթ
լռեցի՝ երես առած

2.

լույս հևացի
լո՛ւյս

խոստովանելու գնացի
կարևոր բառերի հետ
քեզնից էլ տարա
քո պատշգամբի երկնքին
քո շնչած անտառին

ես՝ թևաբաց
հրաշալի գիշերն ինձ
հրաշալի տեսավ

հրապույրի դողեր թաղեցինք
կիսագրկեց
«ներս արի կմբսե՛ս»-
մեր գայթակությունը զսպեցիր դու
ինձ անգուսպ
ներս բերեցիր
գիշերում՝ լուսամփոփներ
թաքնվեցին

լույս հևացի
լո՛ւյս

ԺԱՄԱՆԱԿ

Ես այսօր կնկարեմ քո դեմքը
դու հավատա հյուսիսից ծագող աստղին
որ անկրկնելի վերադարձ է-
հընթացս վրիպողների-

նրանցից մեկը զինվոր է
երկրորդը կորուսյալ է
երրորդը՝ սիրուց անիծված

Ես ամպերին կթողնեմ
արտաքին ձևերը
անտեղյակությունը
շրջադարձերը փափուկ
օրվա ավերից կպոկեմ
կգծեմ քո դեմքը

Ծիածանից հետո լվացված
իզուր-
անցնող բանաստեղծը
նմանության հանգեր կգտնի
անցնող նկարիչը
պատասխանատու կմոնչա՝
հանճարեղ է
անցնող
օրնիբուն անցնող
իմաստասերը
բառերի ետևում կպահվի
մնացածները
բացատրություն չեն ունենա

բոլոր եկողների մեջ
միշտ մեկը կբացակայի

ԿՈՐ ԳԾԵՐ

շրջան գծող զիծը
մինչև շրջանագիծ դառնա
միացած չէ
հատված չէ
մինչև կոր գծերի միանալը

ազատ տեղեր կան
դրանք մեր կատարելության
ենթադրվող աղեղներն են

մենք բաց ենք
ազատ չկաշկանդված
և կենսառիթմերը
ջրի մեջ գոլ
տոգած մասուրների չափ են

սերը
իբրև կենտրոնով անցնող գիծ
բաժանելու է շրջանագիծը
նրան շոշափող մեր կրքերը
բազմաթիվ անուններ կունենան
որոնցից մեկը
ամենատարօրինակն է
ուզում եմ ես
խոստովանել

մենք բաց ենք

ՆԱՎԱՍԱՐԴ ԽՈՆՋԱՆՔ ԼՈՒՍԻՆ

արթնությունս չի նիրհում
չի թալկանում
կռպերին չի ծանրանում

գիշերը արթնությունը
և անվերջ լամպը էլեկտրական
(օ՛ հայտնությունը էդիսոնի)
չի վերջանա

գիշերը լամպը,

արթնությունը չի վերջանում
չի մխում
որովհետև ի՛նչ գիշեր
երբ մենակ չես հենված
պատուհանի սպասումին
էլ ի՛նչ քամի այդ գիշերվա մեջ
որ չի հրում մեղքը
որ չի հուշում այգը հղացումի

որովհետև լուսինը կաթում է թեք
օ՛ կաթում է շեղբից
դեղին բրոնզը
ցուցլուն ոսկին
ցլում է
ոսկի է
մանյակ է
ասես՝
այս գիշեր
գիշեր է
քո պարանոցին

արթնությունդ
խռովք է
խռովված է
խռով է մեկից
լուսինը՝
կաթում է
կաթում է
կաթում է

մրջյունը սահում է
ու հասկը սահում է
ու սահքը մեկն է
պատ է անվերջ
վերջը՝ ընթացք է
ցատկ է վերին

գիշերը պատել է խոնջանքը
մինչդեռ հասկ է պատուհանը
ու սպասում է
ծղրիդ ու մրջյուն է
արթուն է թունդ է
իսկ թունդը խփում է

խփվում է
Վերին

քամին
խոնջանքը
լուսինը
մեկ են
և քամին
լուսնից փշրանք է նետում
ուսիս

լուսինը մարմար է
մարմար
նստում է
դրսիս

լամպը էդիսոնը
ուղիղ է լույսը-
խփում է ուղիղ
ներսիս
չի մխում, չեմ մխում
ա՛խ մութը ողկույզ է
սաթ ու մրուր է-
մինչդեռ գիշերը
ողկույզ առ ողկույզ
հալչում է վերին ու վերին-

արթնությունս
խոնարհում է
խոնարհվում է
անվերջը
վերջը

ՏՈՂԵՐՍ

բառերս
տողերս
թներս

դեմքով դեպի պատը

փախուստը
ծննդյան օրը
հեռուն
մեկնվում են
հենվում են
աչքունքով
մկաններով

զարկերակը խփում է պատին
տաքությունը մնում է ներսում՝
ինձ մոտ

հավաքում եմ իմ լույսը մորս համար
և հեռացնում եմ տազնապը
շատը մորս համար
և սանձում եմ հավատը
և այրում եմ

որովհետև ընդամենը թղթի վրա է

ես հիշողության հեղուկ եմ լցնում
ամեն անգամ զգացածիս
որ բառեր են
որ բառեր են մեքենագիր

տողերս
բառերս
թներս

ԵԼՔ

ասֆալտը հոսում է
քեզ քեզ քեզ
ես տեսա ինձ գլխիվայր
այդպես էր երբ հայրս գնում էր

կոպերս ընկնում են
վերք վերք վերք
տուր ինձ լինելու մի եղանակ
հնք հնք հնք

տաք տաք տաք-
այդպես էր երբ մայրս գնաց
հետ հետ հետ
ասֆալտն ինձ շրջում է
փոխիր ինձ փոխվիր ինձ փոխիր ինձ

վեպ վեպ վեպ
թող ինձ
լցնելու մի զարդանախշ
այդպես է երբ
փակում եմ փակվում եմ փակում եմ

ԹԱՅ ԽՌՈՎ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ

որոշեցի
չսիրահարվել նրան
չսիրել

տանը՝
տարբեր չափի
բնավորությունները կան
գրապահարաններում
մուգ շոկոլադե երկդուռ
պահարանում՝
ամեն ինչից
անցյալից
թղթերից
ստիխներ
թաց խոռվ օրերի մասին

լսիր՝

միգուցե կարդամ
ու քրքջանք
փռշտալով
մեկ-մեկ
միամիտ
փռշուց

ԽՈՍՔ ՏՈՒՐ

բաց թող ինձ
բաց թող ելքերից քաղաքի
բաց թող-

մաքուր հիշողություն է
արբեցումն ավետափ է
իսկ սերը՝ հաստատ ավելի

երջանկությունը փչում է
վախը
կասկածը
փչում են
բայց մի ծառ ծառանում է
մեջքիս՝
մի բողբոջ է պայթում
մի քամի
ուզում է զուգավորվել

բաց թող ինձ

այսքան մնացել է հասկացվելու
այսքան՝
լցվելու
լցնելու թացով
այսքան վերև չգիտեմ
ում աստղի հսկումն է
ում տղամարդն է
ում կառչումը

քաղաքը հավես չունի
զբաղվելու ինձնով
բայց մի ճյուղ սրտիս
մի ճյուղ

ճոճք է դարձել

ինձ թող-

բողբոջը անմեղ զմայլանք է
օտարությունը երկաթի համ ունի
քաղաքն ափեափ է
տղամարդիկ կատարելագործվում են
ինձ սիրահարվելիս

ես հավես չունեմ
լիքը
ավել-պակաս
սիրահարությունների
ծառերի փախուստն անհաշիվ ինձնից է
և սերը՝ հաստատ ավելի

բաց թող ինձ

ծլումն այն կողմ գիտեմ
խախտումը՝ ծավալների
օդը՝ անարյուն
օդապարուկների
քաղաքի գլխին տրաքվող
գույների
գուլերի
բայց քամին այն բողբոջն է տանում
միշտ սերն է
հաստատ ավելի

խոսք տուր
խոսք տուր որ երկուսով լինելը
խաղուպար է
որ ծղրիդները չեն լքի մեր զարթնումը-
այսքան էլ ծալում ենք հիացմունքը
քաղաքը չի՞ դիմանա
սիրուն
սիրուն աղջիկների տխրությանը
մրսածության համար
քաղաքը բանաստեղծին պատժում է
ես հավես չունեմ
ես հավես չունեմ մեղավոր լինելու
քաղաքը դժվար է համոզվում

տղամարդիկ պատրանքը կլլում են
բայց ճյուղը
դիմադրում է
դիմադրում է ճոճքին
այսքան մնացել է հասկանալու
այսքան էլ շրիկալու
քաղաքում բամբասում են

բաց թող ինձ

սիրուն աղջիկների լրջությունն անտանելի է
խոսք տուր որ
խոսք չես առնի
խոսք տուր
որ ցանկություն չմնաց ցանկանալու
բայց բառը խոստանում է
գնացածների ծանրությունը ռելսերի հետ է

ճանապարհը չեն բաժանում երկուսով-
ճանապարհը չեն բաժանում երկուսով
մնացորդը
բողբոջը
առաջնեկը
երկուսինն են

մազ մնաց գիտենամ՝
ինչ է ապրելը

ԴՈՂԵՐ

դողերը բարձրացնում են ինձ վեր
առավոտվա դողեր են-
ես տեսնում եմ՝
ինչպես է շերտ-շերտ ելնում
ամեն շերտի հետ սրսրթոց է
ամեն վերելքի հետ
սաքսուռ
բայց մարմինս տաք է
վերմակով լուռ փակված ու
մտքերս
դատարկ
պառկած

խորն են
ինձնից հեռու
արդեն

ՎԱՐԺԱՆՔ

սովորեցրու ինձ պարզ լինել
ինչպես այս ձյունը
որ թափվում է
թրջում է կոպերս
և խաղաղվում
խաղաղ
հալվում է ամերիս

ամերս ահա
պարզել եմ
քեզ
վերցրու՝ թաց են
վերցրու ու
պահիր աչքերիդ
մինչև
գոլ լինի
գունատվի լույսը

փողացային լապտերների
մաքրիր ինձ
սովորեցրու խաղաղ լինել
կեսգիշերին

մինչև փոխվի օրը
մինչև փոխվի տարին

ՍԵՐՍ

այս անգամ
քո շեմին չեմ մոտենա
չեմ հենվի
քո չուգելուց չե՝
իմ ուգելուց

ինձ այլևս վերջին անգամ
չեմ փորձի
չեմ համեմատի իմ՝
քո ձգողականության
դաշտերի կայունությունը
չեմ համբերի՝
ինձնով քո զբաղվելուն
քո պարապությանը
քո խիստ զբաղվածությանը

ինձ կթողնեմ Ամենա-ին
թող վերցնի խոստովանանքն իմ
մատուռի մամուռին
թող դիպչի
թող սեղմի
հպի ինձ
մեղքերն իմ
ցավեցնի
մաշեցնի

կջրեմ
կխնամեմ

չեմ շատացնի ինձ՝ քեզնով
չեմ պակասեցնի քեզ՝ ինձնից
որ հետոյի համար՝
տերևաթափին
մութն ընկնելիս՝
չասես ուշ է
հարմար չէ՝
սե'րս
Ժամանակ չունեմ սե'րս
տեղին չէ սե'րս
արմատով է՝
սե'րս
շիվ կտա
սե'րս

հողի մեջ կդնեմ
խորը

ԼՌԻԿ

ի՞նչ ճյուղեր են
մեր հուզումները
քերծել
դիպել
և անպաշտպան է սիրտը
և բացճակատ երբ
չի ընդվզում
չի գայթում

երբ մի ավիից թափվում
տակնուվրա
ելնում է բառը
չասված
չարտասանված
սեղմող
սեղմված

ի՞նչ քերծումներ են.
հյույժը՝ չգատող չգատվող
հյույժը՝ անպաշտպան
բացճակատ
հուզումների

տարանցիկ է սերը
սիրտը՝ լռիկ
(այս ի՞նչ ժամ է - ճթճթում է աչքերի մեջ
դալար ոլորվում է)

երբ մի ավիից շատ են
նետումները
սրտի
ցավի
կրնկի տակ
լուռի

փարվե՞լ այս ճյուղերին
հուզումներից քերծվա՛ծ...

քերծող
հուզումները
տաք կոկորդում վերքի
մզե՛լ
մզե՛լ
մզե՛լ... լռիկ

ԱՆՎԵՐՋ

ահա այսպես-
մտածեցի՝ ինչո՞ւ թաքնվել
տողերի հետևում
ինչո՞ւ խաղ խաղալ

մտածեցի քեզ գրել-
ամենասովորական
չբարդացնել
չշղարշել
չը՛

բայց ահա նորից
բառերն ուզում են լռել
բաժին-բաժին անել մտքերը
իրար վրա գցել անկեղծության պահը
խախտել
զգացմունքների հերթականությունը
ահա կրկին բարդանում է

(տեղում են մտքերը՝ բոցավառ խենթ)

մտածում եմ՝
չվերջացնե՞լ
չասել ամեն ինչ կարգին է
չթացտվել աշնան խոտերի սառնությամբ
ծրարել նամակը
օդի մեջ թողնելով
մնաս բարովը
լուծվելով կարոտելու և
հոգոցների դաշտում
համբուրել քո խտությունը
ագահորեն
ագահաբար

չարունակել

չխանգարել
թափվող տերևների
անկումը

ՍԵՂՄՈՒՄՆԵՐ

փորձեցի՝ չստացվեց
լաց չստացվեց
անձկության
տրոփող
ափերում
սուսամբար չզգացի

ցնդեց ցնորեց
ապրումների բույրը մնաց
կպած
կախվեց քարշ եկավ
արցունքներ չդիպան
հիշողության եզրերին

ապրեցի
մնացի
պտուղների կորիզներում
դառը՝ ասված խոսքի
քաղցր կիսատության մեջ
դառնացրի դարդ քամող պոետների
շրթունքի ցանկությունը
ապրեցի մնացի հենց նրանց տողերում
գիր ու ճակատ ունեցողի
նշանով կամավոր
ցանկացած թև տվող հիացք
ինձնից
ցած
զլորվեց-

չգայթե՛լ փշրանքները

սուսամբար չզգացի

ի՞նչ եղավ
սեղմումներ ունեցա՝
կարոտի
անըջանքի
շատ սիրուն
մտերմիկ բաների
որ բացում են թրթիռները
միլիմետրային տարածությունների
որ վուկանացնում են տեղումները՝
թեթև սիրային՝
անընդհատ ընդոստնելով ինձ
այսպեսիս
նրան՝ իր նմանին-

չմատնե՛լ սրտի տուն մոտեցնող ճամփան

սուսամբար չզգացի

գտա որ ներսում
փակված վիճակները ստույգ են
անստույգ ցանկությունների կողքին
երջանկության թևքով սրբած
իմ և նրա լարումները-
չթափվի՞ հանկարծ
խանձահոտ գա
անզգուշության տոթը տարավ
ինձ
անցյալ կրկնող
տխուր անունների միջով
մոտով անցա
խնկի օդ զգացի.
մզեց
տխրեցրեց
հեշտացրեց
գույն չվրիպող աչքերում
ընկնելս հրեցին
չսպառվող շերտի հետ մնացի
թափով վերևում
(սուսամբար չզգացի)

աստղս բռնեց
շաղվեցի երիցուկներին
խնդումին

էլ ի՞նչ եղավ
որ հասկացվեց թաքցնողի իմաստը-
մերժե՛լ զգացմունքից դուրս
լեզվական շեղումները

գտա որ պարտ եմ
որ պետք է ապրել
դժվար թանձրությունը արյան
ապրեցնել անվերջ՝
ճիշերով
թովումներով
գսպումներով
լքումներով
բարդ

ինձ կալանած կորստից
շարտվում եմ
բարձրվող ապրումների գոտի
մեկն ուզում է իջնել
տողերում
ուզում է հասցնել
վերցնել-
հուսալքումից չպարպե՞նք
թախծի միջնորմները
ամեն օրվա խնդում
ապրենք
լինենք
միջուկի կծկումներում-

ի՞նչ եղավ-
ծխեց
ծխեցրեց

ես վերևում
գուլալ
հովիտներում

ինչ եղա՞վ
ինչ եղա՞վ

ԼՈՒՅՍՈՎ

սիրելիս
իմ անսովոր
իմ պատեհ
և ժամանակին

ծաղկում եմ ահա
քո կողերին
այնպես եմ բարձրանում
այնպես եմ խտացնում
անհնար՝
ինձ-քեզ
չտեսած
անիմանալի

իմ անսովոր

արթնությունս
անվերջ տեղափոխում եմ
քո տարածություն
քո ներկայության
քո գրկի մեջ
արթնացնում
զնգացնում
մեղավոր
ցրում
սայթաքում
քո սյուներին
քո մեջ

իմ պատեհ

լույսով
լույսով
լույսով...
և ժամանակին

ԳՆԱՄ ՍԻՐԵՄ

զնամ սիրեմ

օրն հարմար է
որ ինձ շոայլություն անեմ
որ ակնթարթն ամեն
ինձ փարեւով ծնվի
որ ինքը չիմանա

քնքշանքներ գլորեմ ուր ասես
գլուխս մի թեթն պտտվի
կես սիրուց թողնեմ ու գնամ
ուր էի՝ ինքը չիմանա
ով ասես հեռվից թրթռա թե հասնեմ
թե հասնեն ինձ գրկել ուզենան
թող չասեն որ ինքը չիմանա
«ով սիրուն» կանչողին քրքջամ
խոժոռվեմ ու սիրեմ
շփոթվեմ՝ շատ սիրեմ
սթափվեմ՝ հեռանամ
ինքն էլ չիմանա

մոռացվեմ հայացքում մի ծարավ
ծարավեմ-որ ափին մոտենամ
ուսմ ձեռքում գվարթեմ
ուսմ ուսը գողանամ
թն առնեմ
թն առնեմ ու շուրթին չհասած՝
աչքերս թող շաղվեն
մարմինս դող ընկնի
սիրուց կես
թողնեմ ու հեռանամ
ու ինքը չիմանա

... գնամ
չկանգնեմ
չնայեմ
չդառնամ
վախերը մտրակեմ
ու սիրո երակից ջուր խմեմ
գորանամ
միամիտ
օրը ինձ
իր ձայնից ճանաչի
սերն էլ թունդ լինի
գլուխս թող բռնի-

խայտանքներս հանեմ
ուր թողնեմ
ուր գնամ
որ ինքը չիմանա

հե՛յ սանձերն արձակեմ
պինդ մնամ
ուր լինեմ
ինչ առնեմ
ինչ տանեմ

ջի՛նջ սիրեմ

ՉԻՄԱՅԱԾ

և թող քամին կրկնի-
տուր թներդ
իմ չիմացած
իմ չիմացած ծովին տուր՝
թանկանամ
խենթանամ՝
տուր մարմնիդ շղարշները
սփռեմ հորիզոնին
ալիքները գրկեն
թրթիռներդ ներսից
գրկեմ քեզ՝ քնքշանամ
գրկեմ քեզ՝ քնքշացնեմ

քեզ տամ
սարսուռներս
սրտապատառ
քեզ գլորեմ ավազներին
թաց գլորվենք
ընդդիմադիր ու սիրաշատ
հոսքով՝
վեր վեր
ու երբ կուրծքդ հանկարծ
ճողփա իմ համբույրից.
ես խռովքս կխոնարհեմ
ոտքերիդ տակ
ու կշնկամ՝ թաց մազերիդ

թաց կշնկամ՝
սերս
ծովադուստր
երկինքը մեզ սաստի
քամիները վնգան
հորիզոնն ինձ
հետ կանչի-

ծովը խռով էլնի ալիքներին
մենք խելահեղ երկու
մենք երկուսս հեղված սիրով
մայրամուտի նարինջները
կզլորենք

ՉԳՏՆՎԱԾ ԲԱՌԸ

վերցնում եմ
անցյալից մնացած բառերը-
ափսոսանքի փռշի կա
փախուստ է հիշեցնում
ներկայությունը
հեռավոր օրերի

մոտենում է մեկը՝
անխոս անվրդով
ապավինում է
իմ ունեցած բառին
լուսաբացին
կրակոցից դիպուկ
անժամանակ
ոչ ոք չի հեռանում
լռում է
մոլեգնում է
դիմադրում է
նոճեհասակ բառիս՝
անզոր է
անվերադարձ

ներսուդուրս է անում
վարանումից
տվայտանքից
էլի՛ բառից

խոնարհվում է
փլվում է
հառաչում է
գրկիս մեջ
մեղսոտ անօգնական
թներիս է լցվում

իմ ունեցած պահին
իմ չգտնված բառը

ԿԱՅԾԿԼՏՈՒՄՆԵՐ

իմ սեղանին հիմա տարբերություն չկա
երկու պտուղ երկու տարբեր երկու ուրիշ
մետաղյա սկուտեղ
իսկական հնդկական
նարնջի հաստկեղև կողը
մոտ-մոտ խնձորին՝
կլոր թեթև
կլոր ապակու մեջ՝ զեյթունի հատիկներ
հանուն սիրո
մարմինները փայլուն
հագեցած պինդ
ես միշտ հիասթափվում եմ
նրանց ճշմարիտ համից
մենք շատ բան թաքցնում ենք
երբ ժպտում ենք
ահա թեյի գդալը սուրճի ափսեն
և մեղրը մեկ-մեկ
կուլ եմ տալիս,
որպեսզի խիզախության լուսանցքները
բացվեն
տարին սկսվում է մեկով՝ ինքնավստահ
իհարկե ցուրտ սենյակում
մեղրը սպիտակում է
հետաքրքիր մարդիկ են
էս բանաստեղծները
Անդրանիկ Կարապետյանն
ասում է՝ ապրես
ես այդ ելևէջքով զգում եմ տարածությունը
նա ժպտում է
ես ժպտում եմ

մեր ժպիտների փայլը տարբերվող է
Արա Արթյանը զիլ ժպտում է
պետական հիմնարկում չեն վճարում
բանաստեղծությունը բյուջե չունի
Սերգեյ Վարդյանի ծխախոտն է ժպտում
նա գոհությամբ կրկնում է
բանաձևեր
հենց նոր լսած բանաստեղծությունից
ուզում է այդպես ապրել
թող ապրի
դարը վերջանում է
Թինան ժպտում է
(քիչ առաջ նա երգում էր)
մենք ավելի մոտենում ենք
քեզ
ես սեղմում եմ մերոնցից մեկի ձեռքը
ճիշտ է - ասում եմ
մերոնցից մեկին
համեմատություններ չեմ սիրում
բանաստեղծության սեռն ինքն է
Բանաստեղծը
գրչիս տակից փախչում են բառերը
դրանք գրական հայերենում
չեն օգտագործվում
մենք ամեն ինչ ենք ասում
երբ ժպտում ենք
Քլինթոնն իր բախտը կապել է
Ամերիկայի Միացյալ Նահանգներին
Քլինթոնի բախտը որոշում են
սենատոր-մահկանացուները
բանաստեղծները
բանաստեղծություն են կարդում
որ տաքանան
սենյակը չի ջեռուցվում
Ռոզա Հովհաննիսյանն այստեղ լինել
կասեր-
Գազիկ Սարոյանի մորուքն էլ է
ժպտում:

Հ. Գ. Սլավի Հարությունյանը
թե կարդա սա՝ կասի՝
ամեն ինչ վավերագրական է
(որը միշտ չէ որ լավ է)

նա այդպես
զգում ու գրում է
բանաստեղծությունը
իսկ մեղրը ցուրտ սենյակում
սառչում է

ԻՐԱՐԱՆՑՈՒՄ

մի ընդունիր ծառի կնճռոտումը
մի երկնքի չափ պահապան ունի
մի հույսի՝ գալարում
որ ձգում է քո մեջ ժամանակը
քո կողքին սլացիկ թփերը՝
փոշու
արևի
այրուկներով

(այսպես շրթունքներն արտասանում են
փակ տրոփումները
փակ բախումները
փակ պրկումներ)

զարմանալի տխուր է և հետաքրքիր անսովոր
ինչ էլ տեղին է բարձրանալը
իմ թփերին մի՛ սովորիր
կրծքիդ ահա փետուրվում են
խփոցները՝
սրտին
կարծես մոտիկ
կարծես ավելցուկով

իմ զգայնության փշերին
մի՛ դիպչիր
կարմիրն ինձ ներսում
կխփի

իմ դրսի աղավնին կխփվի

(ես ի՛նչ սովորական քո կողքին)

այդպես շրթունքներն
արտասանում են
փակ տրոփումները
փակ բախումները

փակ պրկումներ

իմ թների օղակումին
մի՛ հյուսվիր-
անտանելի փխրուն է
շքեղ իրարանցում
թավալումը ներսում

ինձ սովոր հայացքների ընկնելը՝
շոշափումի ահերով
հորինողի համառությամբ ձգվող
անժամանակ տխուր
մի՛ ընդունիր տատանումը
ծառի ներքններում
մի երկնքի չափ բացություն կա
դիմանալու հեղեղումների
պատնեշները քանդող
անխնա
ինչպես համբույրները
շրթունքների փակոցներում
անսովոր՝ վերններում
սրտին մոտիկ՝ տարածքներում

(ես քո կողքին չհասկացված)

տխուր -զարմանալի
անսովոր-հետաքրքիր
տատանումները
մեղքի բաժանումները
կրքի խնայումները

տեղին է՝ գրկիդ մեջ
թներիդ օղակումից
քո փակոցներում
գլխիվայր
գլխիվայր
թաղվելը

(էլի սկսեցի՞ր)

ԸՆԾԱ

պահում եմ
խարուկի մեջ գտված
քո կրքերի պաղ մոխիրը

թե ինչ պարզև է սիրտն ի վեր

ափերս մոխրագույնի մեջ՝
հրաժարվում եմ
քեզ համար
գեղեցիկ լինել
ուժեղ լինել երկուսի անցյալում

թևաբախում ես
ինչպես լինելդ՝ շուրթից քայլ
ինչպես լինելս թևաբախում ես
ափիդ՝ սրտի չափ ամայություն սեղմող
աչքերիդ՝ նվիրում խլացնող

մատներս հիշեցնում են
տեսնում եմ
ուսերիդ անդորրը տունդարձի-
այնտեղ ծպտված կարոտը
մորմոքներն ու
քամահրանքը

պատկերը փշրվում է
անունիդ մեջ
շռայլորեն

ԾՈՎԸ

ծովը տաք
ծովը հրաշալի
կանչում է
ծովը բաց տրվում է
ախ այնպես է
տանում ցավը
ծովը տաք
ծովը աղի
ծնկների հետ
ախ այնպես դաժան է
խաչում ծովը

ախ այնպես
լցվում է
ծնկներից վեր
ուսերից վար
ծովը սիրուն է
ախ այնպես
կանչում-տանում է

ՇՆՉԻՐ ԻՆՁ

անձրև իմ անձև
ուսերիս ծանրությունը սրբիր
ցավը տա՛ր լուծիր քո կաթիլներում-
քո շիթերում
քո խոռոչներում
քո ամոքումներում
քո հանդեսին ինձ տար գլխաբաց
քո բույրերում

շնչիր ինձ

ԱՆՁԳՈՒՅՇ

ամեն օր նստել ճերմակի առաջ
մտածումները խեղդել-չխեղդել
զգացմունքներով
ամեն օր նշել ամիսն ու օրը
լռվել ու մնալ ճերմակին
լռություն հավաքել հատակից
պատուհանի անփույթ բացությունը
մրսել
վիրավոր զգալ
անունդ սրտի մեջ
կրակել ճերմակին
անզգույշ սիրել

ՊԱՏԱՀԱԿԱՆ ՔԱՄԻ

ի՞նչ է նշանակում հաղթահարել
նշանակում է պատահական քամի
երբ արդարացում է օդու հերթական կումը
երբ կանչում է կանչվում է մարմինը
և պայթական է խնայումը
երբ ափահեղձ է բանաստեղծը
իր իմացած ներսի բառի
իր չիմացած կնոջ ներկայությունից
ինչքան տարբեր է թե ում ես հաղթահարում
ինչքան կարճ է թվում
երբ երկար է ձգվում պաշարումը
ինչ նույնությամբ են կրկնվում
բռնկումները

անձրևը չի հաղթահարում
մթնոլորտի պրկությունը
պատահական է քամին և ապակին
պայմանական խզումն է
երկու ցանկացողների միջև
մեկ է՝ կամովին չի փշրվում
առաջին անգամ քերծում է
զգացմունքի նրբամաշկը
այդ ցավը դուրեկան մլմլում է
փորձում է դուրս հրել ուզածդ եղանակը
երբ սիրուն չեն խռովումները
գիշերը չի հաղթահարում
բանաստեղծի անքնությունը
մշտական փշրանքները ծակծկում են
նվաղում են
անվերջ ծավալումը
անվերջ տխուր հասները վերջին
նորից հուզիչ է ավարտում բանաստեղծը
բայց չի հաղթահարում
կնոջ հնարավոր անդունդը
կոկորդում՝ օդու դառնությունը
պատահական քամին...
ենթադրենք՝ իրական է ներկայությունը
մի՛ մոտեցիր դռանը

երբ ոչինչ սեղմված չէ քո մեջ
երբ ոչ ոք չի սեղմվում քո մենակությունից
երբ օդից կախված են սիրո բաժանումները
երբ զգայական ոլորտում
ճշգրիտ են մոտեցումները
և բանաստեղծը կորցնում է ճշգրիտ
և հուզիչ

մեկ էլ՝ սիրտդ ցանկության չափ մեկնիր
մեկ էլ մի՛ խառնիր թունդն ու բացը
և զբաղվիր
հատուկ մեկի բացակայությամբ
իմ կողմերից բռնվիր
եթե տեղահանվել է զգոնությունը
և պերճանքը չի փնտրում հենարաններ
և առարկայական են շոշափումները
և պատահական է քամին
և ապակին պայմանական խզումն է
(երկու ցանկացողների)
և հրավեր է անընդհատ
նշանակում է՝ ծուղակել չասվելիք բաները
նշանակում է՝ չասել
երբ բարձրաձայն չի տրվում
մեկ է՝ քեզ չեն հարցնում ինչու
մեղքոտ ու
շատ սիրուն են շաղախումները
ինչո՞ւ են ամբոցները
և գրկերը փլվող...

մեկ էլ՝ ի՞նչ է նշանակում հաղթահարել
նույնն է թե ոչինչ չես վերցնում շուրթերից
նույնն է թե չես տալիս սրտից
նույնն է թե չես խեղդվում անքնությունից

ԱՌԱՆՑ ՔԵԶ

ճերմակ լուսանցքներ
ամեն ինչ ամեն ինչի համար
պատկեր
երևույթ
վիճակ

ո՛չ կաթիլ ես դու
ո՛չ ցողուն
ո՛չ բլուր
բնական, ինչպես ինքը
ուռենու տերևի ծտերն առավոտյան
երեկոն սերմնաքաղների տարափով
դեմ դիմաց՝ սարեր
անտառով ու ձյունով՝ առանց ինձ
տանիքներ հանգստացողների համար
եկեղեցի
վերամբարձ կռունկ
նորոգ հիշողություններ

առանց քեզ

ամենն այս տեսնելու համար
սենյակ՝ տաք իդեալական
լոգարան
ուղեգորգ
բազմոցներ
լամպ որ կարելի է չվառել
որովհետև գրասեղանը պատուհանի մոտ է
տպավորություններ որ կարելի է չգրել
որովհետև շատ են

այսքանը գլխի ընկնել
ապրել կեսօրին
խորքերը գցել
անթերի շոայլ

մի պատուհանի միջով ապրել
եթե ուսերդ գրասեղանից բարձր են
եթե թանաքը թունդ է
եթե գտնելու մտքեր ունես
թուղթդ ճերմակ չի մնա
լույսդ՝ չվառած
օրդ՝ չպսակված

ՈՎ ԿՀԱՆԴԳՆԻ

դու խանգարում ես ինձ
ձեռքս բռնում ես և ասում-
խոստովանիր
գրիր՝ ի՞նչ ես տառապել
թեքվել ես ո՞ւմ հայացքից
ո՞ւմ համբույրից լացել

դու խառնում ես
լցվել ես աչքերս
հոսում ես հորդում
թե՛ խանգարված գրիր.
անվարան թափթփված
ու քնկոտ թեկուզ-
խոստովանիր

այս թռչունն ո՞ւմ ափից է
պոկվել
հորիզոնը ո՞վ է լցնում...

ո՞վ կհանդգնի քեզ չսիրել

ԳԻՆՈՎ ԱՍԱ

ի՞նչ հաշիվ է
պոետ
գինին էլի քիչ է
բառդ ոտքը մեկնեց
ընդամենը ներսում
տակնուվրա եղավ

այսօր սեր են բացել
և գինու հետ խառը
շռայլումդ ի՛նչ է
պոետ

մի հարբեցող անցավ
հաշտ է փողոցի հետ
ճամփան գլորվում է
բառի ուսին հենված
գիտեմ՝ ծախսը շատ է
հմայումը չանցավ.
մեկ անգամ էլ ասա՛
իմ ծաբավն էլ հասավ
իմ ափերով արի՛
իմ գոլերում լողա
իմ եզրերին խոտոր
սայթաքումդ դողա

իմ հատակին թեքվիր
գինու
իմ հատակում
ասա՛
վերջը ճիշտ է պոետ
թեև վատ ենք ստում
նորից
մեր կարոտած լավին
հոսանքները տարան

պոե՛տ
պոե՛տ
պոետ

դու ինչ
բառդ շատ է անհաշտ
գինով ասա՛
չանցավ՝ անցավ
ասա՛ չը միայնակ
ասա՛ անհնազանդ
բառդ ծոցվոր մնաց
էն բողբոջը վկա

էլ ի՞նչ բացեմ
ասա՛ -

իմ պատերը ինձնից
ինձ քերծելով տարան
զինին կհերիքի՞ արդյոք
թաքուն՝ հազար
թարթումներից գոնե մեկին

(չհեկեկանք արի՛)

զիրկդ էլի՛ թափուր
աչքդ թա՛ց է կրկին
այսօր Սերն է բացում
սերն է կիսում նորից
կնոջ մղձավանջից մի պուտ
շռայլումը հե՛ջ է

կինդ
քեզ չի՛ ների՝
պոետ
զինին թունդ է

ԹՈՒՆԴԸ

խելահեղ ու
հանդարտ
կանցնեմ նրա դռնով
կասեմ՝ ես եմ հասել եմ
ներսում եմ

որ ուներս կարծես թաց են
որ գլուխս մի քիչ պտտվում է
որ մարմինս արևում է

շրթունքս ծաղկել է
ծնկներս լուլա են սառցե

նա թեք կժպտա
դառը կժպտա
հուսադրող կժպտա՝
քեզ համար թեյ կլցնեմ
թունդ՝ բարկօղիով
թունդ՝ սերը հետը

թունդ՝ կիսմես կլավանաս

ՁՆԾԱՂԻԿՆԵՐ

բառերն էին իմը
բույրեր՝ նետված նետված նետված
Սոնային՝ ծաղիկներ ձյան
հողից անգուսպ ելած զարթնած
դեռ կլինեն իմը բույրեր՝
շիթած գույներ
գոցված գոցված

սրտի այս ում շատն է առեջներից
կաթում-կաթում
հոգու ո՞ւմ կտավին՝
ցավոտ-խավոտ ներսն է թնդում
էլ կա՞ն խնայումներ
պահված բառի հեքում
ընծայումներ տիեզերքից
իդձին տրված գերված

դեռ կլինեն բույրեր բույրեր՝
թռչնած-թափված
իջնեմ ծաղկաթերթին՝
ցուլումներս՝ փշրած փշրած

օ՛ ձնծաղկի Աստված

երգս դեռ կթնդի՝
առավոտին գրկած
նաև գրկված

բառեր բառեր
ու մինչև երբ՝ նետված նետված
Սոնա... այդ ե՞ս՝
բույրին փարված ապրած-չապրած
լցրու ծաղկի իմ բաժակից՝
գնա մնա՝ արբած արբած արբած

ԷԼ ՈՐՏԵՂ ՉԵՄ

հիշում եք
մեզ ինչու են բաժանել
հորինվածների ու հորինողների
մեզ ինչպես են թաթախել
երբեք չավելացած գինով
կարոտելով մի լիքը ավել բառի
այս հրաժարումը ինչ խաբուսիկ է՝
ինձ վերադարձնող

ամեն վայրկյան հաշվում ու տքնում են
քաղաքի օտարականն ու սիրահարը-
որտեղ էս
կարգին չիմացա՝
ում խոցելին եղա
ում փրկածը
ում մատնածը

հետոն դադար է
երկուսով ենք հրահրում
վիճակի պատկեր

օ՝ լռությունը
համոզիչ է բառերից

խաղ ու սեր է
սեր ու խաղ է
ամբողջ կրկնությունը

գիրկ գրկի
գլխի ընկանք հարկավոր բաները
գիրկ - գիրկ փլուզեցինք
ամբողջ ռոմանտիկան
գրկելիս բացթողումներ չեղա՞ն
խնայածը դարձյալ բառեր էին
հարկավոր ու ճշգրիտ
մեր նախնական հափշտակություններով
որ փոխարենը ասում ենք՝
մոլորություն է
դիպված է ասում ենք սերը
սիրո այդ բաղձանքը

նախնականը

օ՛ այս հրաժարումը ինչ խաբուսիկ է
(քեզ չեմ տեսնում)
հիմա վեր կկենամ
ու ոչ ոքի կնվիրեմ
իմ հեռացումը

ՈՉ ՈՔ

Ս. Հ.-ին

քեզ ոչ ոք չի ճանաչի
թերևս թռչունը
քո պատերազմից
լուրը թևին
ծուխը թևին
կիջնի իմ ափին
կկտցի իմ ափից
փշրանքները հացի
փշրանքները ցավի
պահ է՝ կանցնի

ոչ ոք չի էլ հիշի
ոչինչ
թերևս կապույտը
այս խնձորենիներից վերև
երկնքի

ՔԵԶ ՀԱՄԱՐ ՆՈՒՌ ԵՄ ՊԱՀԵԼ

իմաստը-
ոչ մի կերպ չես մոտենա ու խաբի
չես զգվեցնի ու փախս տա

կա

(քեզ համար նուր եմ պահել)
ասելու խոսքերը նվիրելու բառերը
թելադրել եմ ներսին միջուկին)

ներքևում այնքան կարևորություններ
դատողություններ
անշուք են փռշիանում
քեզ թվում է անտանելի-
ինչպես չսիրել՝
Աստծո վեհությունը վրան
որ բարակ է ու գրկելու

տխուր են դատողությունները
երթնկող
ուր էլ հասնես՝
բարձր է էլի
թվում է անտանելի-
կարմիր լույսի դադարը
սիրահետելու
անցողիկի

(բերածս նուրը շրիկան է)
անտանելի է ինչպես չսիրել
երբ հայրենիք եկողները
շնչակտուր
կանաչ լույսի մեջ
ցավեցնում են
իրենց դուր եկած գեղեցկությունը
քեզ նմանեցնում են իրենց իմացած
իմաստներին
հետո հարց են տալիս՝
որտեղ է բո՛ւնը

ինչքան պատասխաններ անմոռնչ
բաղեղվել են մեր թներին
ինչքան անժամանակ է ու
անփորձ
քեզ թափահարելը՝
կարևորությունից
մոլորվելուց ու
սիրելուց

պարտված

քեզ համար նուր եմ պահել

ՀԵՅ ՈՒՄ ՉՔՆԱՂՆ ԵՄ

եկա իմանամ՝
ում մեղավորն եմ
ում հաջողության
մոմեր վառողը

տեսնեմ իմ լրումներին
ով կդիմանա
քմայքներս ով կսուլի թեթև
ծանր ապրածս ով կսուսերի
վերջին մարտը ով կնվիրի ինձ

օ՛ այս մոլորումների
շփոթը ցանկալի
որ առաջինն հրեց
մայրամուտի քո արևով՝
հորիզոնին բացվել

օ՛ այդ շքեղ վատնումները՝
տողանցիկ շշուկները
բոլոր անցած իմաստներով
բոլոր իմաստներից վերև

(տեղ ունեմ՝ վերցնում եմ)
օր է- առանձնապես կիրակի
մշուշոտ են
մտածումները տրվող

եկա
մասնակցեմ
մերժումների շքերթին
ծարավ իջնեմ
ծով մնամ
չդատեմ
չդատվեմ

հե՛յ ում խաղաղության համար

մումեր վառեմ
հե՛յ ում չքնադն եմ
ով կգրկի մագլցումս անսերներ
ով կսուլի քմայքներս՝
ծանր-թեթև

ՎԱՂ Է

վաղ է
թռչուններն աղաղակեցին
թռան
իմ և սենյակի ձանձրույթի մեջ

օրը վատառողջ է

սիրողներ չկան
և տոն է մի քիչ երազելը
և ճերմակ եմ թողնում
թղթերը
բայց մեկը որ տխուր սիրել գիտե
տեսնես ինչ է գրում
իմ մասին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկիր
Դառն ու զվարթ
Այսօր
Ինձ
Ժամանակը
Կոր գծեր
Տողերս
Ելք
Նավասարդ լուսին խոնջանք
Թաց խռով օրերի մասին
Խոսք տուր
Դողեր

Վարժանք
Սերս
Լռիկ
Անվերջ
Սեղմումներ
Լույսով
Գնամ սիրեմ
Չիմացած
Չգտնված բառը
Կայծկլտումներ
Իրարանցում
Ընծա
Ծովը
Շնչիր ինձ
Անզգույշ
Պատահական քամին
Առանց քեզ
Ո՞վ կհանդգնի
Գինով ասա
Թունդը
Ձնծաղիկներ
Էլ որտեղ չեմ
Ոչ ոք
Քեզ համար նուր եմ պահել
Հեյ, ո՛ւմ չքնադն եմ
Վաղ է

